ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բժշկական գիտ. I, № 6, 1961 Медицинские науки

«ԱՄԵՆ ԻՆՁ՝ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ, ԱՄԵՆ ԻՆՁ՝ ՄԱՐԴՈՒ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

1961 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսում Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXII համագումարը Մոսկվայում ընդունեց պարտիայի երկրորդ Ծրագիրը, որի մեջ շարադրվում են կոմունիստական հասարակության հիմնական գծերը և նրանց նվաճումների ուղիները՝ լուսավորված մարդկային հանճարի խոշորագույն ներկայացուցիչներ՝ Մարքսի, Էնգելսի, Լենինի ուսմունքի՝ դիալեկտիկական մատերիալիզմի անմար ճառագայթների լույսով։

Իրենց խիզախությամբ, խորությամբ ու թափով զարմանք ու հրճվանք պատճառող պարտիայի երկրորդ Ծրագիրը արդյունք էր առաջին երկու լենինյան ծրագիրների հաջող իրականացման, նրանց մեջ նախագծած ռևոլյուցիոն վերափոխումների իրականացման տնտեսական, սոցիալական և կուլտուրական ասպարեզներում։

Առաջին Ծրագիրը, 1903 թ.՝ ընդունված պարտիայի II համագումարում, հետապնդում էր հսկայական կարևորություն ունեցող կոնկրետ և համարձակ խնդիրներ՝ Ռուսաստանում բազմադարյան ցարիզմի ռեժիմի տապալումը, կապիտալիստների և կալվածատերերի տիրապետության լիկվիդացիան և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը։ Այդ խնդիրներն իրագործվեցին 1917 թվականի փետրվարյան և հոկտեմբերյան ռևոլյուցիաներով։

Երկրորդ Ծրագիրն ընդունվեց 1918 թվականին, պարտիայի VIII համագումարում։ Նրանում նախանշված էր մարդկության պատմության մեջ առաջին անգամ սոցիալիստական հասարակության կառուցման վեհ խնդիրը։ Կոմունիստական պարտիան և սովետական ժողովուրդը այդ խնդիրը ևս իրագործեցին հաջողությամբ՝ դեռ ընթացիկ դարի առաջին կեսում Սովետական Միությունում սոցիալիզմը հաղթանակեց վերջնականապես։

Պարտիայի երկու առաջին ծրագիրներում նշված միջոցառումների իրագործումը պատմականորեն կարճ ժամանակում և չտեսնված արագությամբ սովետական երկրում ապահովեց հսկայական վերելք տնտեսական, սոցիալական, կուլտուրական և քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում։ Ահա այդ նվաճումներն էին, որ ամուր հիմք հանդիսացան ՍՍՌՄ-ում կոմունիստական հասարակարգի կառուցման կոնկրետ ձեռնարկմանը։

Պարտիայի երրորդ Ծրագիրը շարադրում է կոմունիստական հասարակարգի էությունը, իրագործման ուղիները և նշանակությունը՝ իրենից ներկայացնելով կարևորագույն փաստաթուղթ, որը «իրավացիորեն անվանվում է ժամանակակից դարաշրջանի կոմունիստական մանիֆեստ» (Ն. Ս. Խրուշչով)։

Պարտիայի նոր Ծրագրում կատարման ամենայն ռեալությամբ ու կոնկրետությամբ դրված է հիմնական խնդիր՝ մոտակա տասնամյակում ՍՍՌՄ-ում ապահովել աշխարհում բնակչության ամենաբարձր կենսամակարդակը։ Առանցքային գաղափարը, որը կարմիր թելի պես անցնում է ծրագրում նախանշված բոլոր բազմաթիվ ձեռնարկումների միջով, լակոնիկ և դիպուկ կերպով բնութա-

դրված է պարտիայի հետևյալ լոզունգում՝ «ամեն ինչ՝ հանուն մարդու, ամեն ինչ՝ մարդու բարօրության համար»։ Պարտիայի նոր Ծրագիրը ձգտում է ստեղծել մի հասարակարգ, որն ապահովելու է մարդկության ազնիվ գաղափարների՝ խաղաղության, աշխատանքի, ազատության և հավասարության իրականացումը՝ մեր ժողովրդի երջանիկ կյանքի անհրաժեշտ պայմանները։

Սոցիալիզմի հաջող ավարտումն ապահովեց սոցիալ-տնտեսական ձեռնարկումների մի ամբողջ սիստեմի իրականացումը, ձեռնարկումներ, որոնց առողջապահական խոշոր նշանակությունը վեր է կասկածից։ Թվարկենք դրանցից մի քանիսը. 1) մինչև օրս էլ կապիտալիստական հասարակական ֆորմացիայի մըշտական ուղեկիցը, սովի, ցրտի, աշխատավորների հիվանդությունների աղբյուրը հանդիսացող գործազրկության լրիվ ու անվերադարձ ոչնչացումը, 2) բանվորների ռեալ աշխատավարձի և գյուղացիների եկամուտների պերմանենտ բարձրացումը, 3) հարկերի վերացման վերաբերյալ օրենքի կենսագործումը, 4) բնակարանների կառուցման հսկայական տեմպերը և աշխարհում ամենացածր վճարով աշխատավորներին ապահովելու վիթխարի թափը, 5) աշխատավորներին հանգստի իրավունքով ապահովելը, նյութական ապահովումը աշխատունակությունը կորցնելու և ծերության դեպքերում, 6) անգրագիտության վերացումը և բնակչության կուլտուրական մակարդակի խիստ բարձրացումը, 7) սան-հիգիենիկ պայմանների ապահովումն արտադրության մեջ՝ շրջապատող միջավայրի, բնակավայրերի առողջապահական բարելավումը և այլն, և այլն։

Միջոցառումների այդ ամբողջ կոմպլեքսը հանդիսացավ Սովետական պետության տնտեսական, կուլտուրական և քաղաքական հզորության արդյունքը, մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի ժամանակաշրջանում ժողովրդի հսկայական աշխատանքի արդյունքը։ Եվ հաղթանակների այդ ամբողջ կոմպլեքսը իրենից ներկայացնում է հզոր մի գործոն, որը դրական մեծ ազդեցություն է գործում սովետական ժողովրդի ֆիզիկական առողջության վրա։

Դրա հետ մեկտեղ սովետական ժողովրդին հսկայական օգուտ բերեց առողջապահության պետական սիստեմը, որը անվճար բժշկական որակյալ օգնություն է ապահովում բնակչության համար և լայն պրոֆիլակտիկ միջոցառումներ է իրագործում երկրում։ Աշխարհում և ոչ մի կապիտալիստական երկիր ի վիճակի չէ սոցիալիզմի հայրենիքի հետ համեմատվելու, հիվանդանոցների, պոլիկլինիկաների, մանկական, կանանց կոնսուլտացիաների, տարբեր պրոֆիլի դիսպանսերների ցանցով, բժշկական որակյալ աշխատողների թվով և այլն։

Նոր Ծրագիրը ժողովրդի առողջության պահպանման բնագավառում նախատեսնում է լայն միջոցների կիրառում՝ հիվանդությունները կանխելու և խիստ կրճատելու, մասսայական ինֆեկցիոն հիվանդությունները վերացնելու ուղղությամբ։ Դրա հետ մեկտեղ ուշադրությունը կենտրոնացվում է բնակչության շուրջ 30%-ի մահացության պատճառ հանդիսացող սիրտ-անոթային հիվանդությունները կանխելու և բուժելու վրա։ Առանձնապես ընդգծվում է արդի բժշկականության ամենաբարդ պրոբլեմներից մեկը հանդիսացող՝ չարորակ նորագոյացումների դեմ ուղղված պայքարի բացառիկ ակտուալությունը։ Բջջի փոխանակման ինտիմ պրոցեսները և նորագոյացումների ժամանակ նրա պաթոլոգիական աճման պատճառը պարզելու ուղղությամբ կատարվող լայն ու խորը հետազոտությունները իրենց դրական դերն են խաղալու այդ նորագոյացումների դեմ պայքարելիս։

Սովետական մարդու երկարակեցության և բնական ֆիզիոլոգիական ծերու-

թյան համար մղվող պայքարը բնութագրված է որպես սոցիալ-կենսաբանական և բժշկագիտական կարևորագույն պրոբլեմ։ Այդ ասպարեզում, սոցիալիզմի պայմաններում, շատ բան է ձեռք բերված — բավական է ասել, որ բնակչության կյանքի միջին տևողությունը, ցարական ժամանակաշրջանի համեմատությամբ, ավելացել է ավելի քան երկու անգամ, հասնելով 69 տարվա։ Տարիքավոր մարդկանց աշխատունակության պահպանումը և ժողովրդական տնտեսության ու կոմունիզմի շինարարության մեջ նրանց փորձի ու գիտելիքների օգտագործումը պետական մեծ նշանակություն են ձեռք բերում։

Կապիտալիզմից մինչև կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած հսկայական առաջադիմության ընթացքում խիստ փոփոխվել են բժշկական գիտության ու պրակտիկայի նպատակները, խնդիրներն ու մեթոդները առողջապահության ասպարեզում։ Ընդհանուր գծերով՝ եթե կապիտալիզմի օրով հիմնական ուղղությունը բուժումն էր, սոցիալիզմի օրով՝ հիվանդությունների պրոֆիլակտիկան, ապա կոմունիզմի ժամանակ կենտրոնական տեղը գրավելու է նաև հոգատարությունը առողջ մարդու վերաբերյալ, նրա օրգանիզմը առավել ևս ամրապնդելու ասպարեզում։

Հոյակապ է կոմունիզմի շինարարության պլանը, որը նախորոշված է պարտիայի Ծրագրում, բայց էլ ավելի հոյակապ ու անսասան է սովետական մարդկանց կամքը, էնտուզիազմն ու վճռականությունը այն կենսագործելու նկատմամբ։ Կոմունիզմի համար մարտնչողների մեծ բանակում իր պատվավոր տեղն ունի նաև մեր երկրի բժշկական-սանիտարական աշխատողների բազմամիլիոն ջոկատը, որը եռապատկված եռանդով կկատարի իր սրբազան պարտքը սովետական մարդու՝ կոմունիզմի կառուցողի առողջությունն ապահովելու գործում։